ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գույքի ապահովագրությունը հիանալի միջոց է պաշտպանելու Ձեր անշարժ գույքը և կանխելու խոշոր ֆինանսական կորուստները հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5
Հեռ.՝ (+374 60) 540 000
Կայք՝ www.silinsurance.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Հրդեհ,
- Պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս,
- Մեխանիկական վնասներ,
- Տարերային աղետներ (բացառությամբ երկրաշարժի), այդ թվում՝ փոթորիկ, մրրիկ, մրրկասյուն, ուժգին քամի, տայֆուն, կայծակի հարված, ջրհեղեղ, սողանք, ստորգետնյա, լեռնային վանգվածների ոչնչացում և փլուզում, կարկուտ, հորդառատ անձրևներ և առատ ձյուն, հեղեղում, մթնոլորտային տեղումներ, սելավ, ձնահյուս, փլվածք, քարաթափում և բնության այլ ավդեցություն,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «Սիլ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 28.04.2014թ. թիվ 05/20 արձանագրությամբ հաստատված Գույքի ապահովագրության պայմաններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի համար՝ ապահովագրական գումարի 1%,

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ է պանգահարել (+374 60) 540 000 հեռախոսահամարով,
- Պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմնին (գողության, կոտրանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում այցելել ապահովագրական ընկերության գրասենյակ և այնտեղ լրացնել հայտային դիմումը կամ ներբեռնել այն www.silinsurance.am կայքից, ձեռքով լրացնել և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարն ուղարկել claims.dep@silinsurance.net էլ. հասցեին կամ VIBER/Whatsup/Telegram հավելվածներով՝ (+374 96) 42 22 75 հեռախոսահամարին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհարժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրության պայմանագրով և/կամ ապահովագրության պայմաններով նախատեսված Ձեր պարտականությունները չեն կատարվել,
- Գույքի սեփականատիրոջ/լիազորված օգտագործողի կողմից խախտվել են ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Պատերազմի, վինված ներխուժման, թշնամաբար տրամադրված պետությունների գործողության (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության կամ խռովության հետ,
- Գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ,
- Ահաբեկչության, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ,
- Գործադուլների, լոկաուտների կամ մասսայական անկարգությունների հետ,
- Գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունք ունեցող անձանց դիտավորության հետ,
- Ցանկացած տիպի աղտոտվածության կամ միջուկային վարակման, քիմիական կամ այլ բիոլոգիական նյութերի և հումքերի ներգործության հետ,
- Ատոմային էներգիայի, ճառագայթման կամ ճառագայթային վարակման ազդեցության հետ,
- «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 28.04.2014թ. թիվ 05/20 արձանագրությամբ հաստատված Գույքի ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- **Շարժական գույքին (կահույք, տեխնիկա և այլն) պատճառված վնասները չեն հատուցվում,**
- **Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: